«ՀԱՅ ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՄԱՄՈՒԼԸ ՄԱՏԵՆԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱՀԱՒԱՔ ՑՈՒՑԱԿ»

1794–1980

Կազմեց՝ Մ. Ա. ԲԱԲԼՈՅԵԱՆ, Երեւան, 1986։

Թէեւ սրանից հինգ տարի առաջ է տպագրուել «Հայ պարբերական մամուլը», բայց միայն այժմ ունեցանք ձեռքի տակ եւ դա էլ Մայր Հայրենիքում՝ Երեւանի գրավաճառանոցներում երկար փընտռելուց եւ չգտնելուց յետոյ, նուէր ստացուեց Պրն. Ջանի Միրզաբէկեանից։

Հայաստանում շատ գրքեր լոյս տեսնելուց յետոյ, շատ շուտով սպառւում են, այնպէս որ այլեւս գրավաճառանոցներում գտնելը հնարաւոր չէ, ինչպէս որ եղաւ այս գրքի համար եւս։

«Հայ պարբերական մամուլի մատենագիտական համահաւաք ցուցակ»ը կազմել է Մանուէլ Բաբլոյեանը եւ հրատարակուել Հայաստանի Ակադեմիայի Պատմութեան Ինստիտուտի կողմից։

Մինչեւ հիմա մի քանի անգամ կազմուել է հայ մամուլի մատենագիտական ցանկը, որի վերջիններն եղան Յովհաննէս Պետրոսեանն ու Ամալիա Կիրակոսեանը։ Սրանց կազմած ցուցակից յետոյ, սա ամէնից ամբողջականը ու նաեւ պէտք է ասել, աւելի վաւերականն է, քանի որ այստեղ կատարուել են մի շարք ուղղումներ, սրբագրումներ, վերջին տարիներում լոյս տեսած յօդուածների եւ ուսումնասիրութիւնների հիման վրայ։

Ներկայ ցուցակը տպագրուել է 1986ին եւ բաղկացած է 472 էջից, 20×26 ս.մ. չարուածքի ծաւալով եւ երկսիւնեակ։ Սկզբում (էջ 5) «Ինստիտուտի կողմից» ասուած է երկու խօսք, ուր ներկայացուած է գիրքը, իսկ էջ 6–22ը «Ներածական» խօսքն է, ուր համառօտ ձեւով յիշելով մինչեւ այժմ կազմուած պարբերական մամուլի ցուցակների մասին, անդրադարձել է դրանց մէջ սպրդած սխալներին եւ ունեցած թերութիւններին, ուր բերել է մի շարք նմոյշներ, ապա տուել իր կազմած ցուցակի հանգամանքները։

Մամուլի բուն ցուցակը բռնում է էջ 23–322ը, իսկ վերջում ունի մի քանի ցանկեր, ինչպէս՝ «Հայ պարբերական մամուլն ըստ հրատարակութեան տարիների», «ըստ հրատարակութեան վայրերի», խմբագիրների, հրատարակիչների, տպարանների, մամուլի այբբենական ցանկ, հայ պարբերականներ այլ լեզուներով, գրականութեան ցանկ եւայլն:

Նախնական բուն բովանդակութեան անդրադառնալը, ասենք որ, ինչպէս ինքն եւս նշում է «ներկայ ցուցակն եւս զերծ չի կարող լինի թերութիւններից, որոշ բացթողումներից կամ այլ եւ այլ սխալներից, քանի դեռ չի ստեղծուել հայ մամուլի ամբողջական եւ լիակատար հաւաքածուն մեր գրադարան-գրապահեստներում» (էջ 21):

Բնականաբար շատ դժուար է մի անհատի համար, ամբողջ աշխարհով մէկ ցրուած հայկական պարբերականներն ունենայ ձեռքի տակ կամ կարողանայ բոլորի մասին անհրաժեշտ տեղեկութիւնները ձեռք բերել: Այս պակասը լրացնելու համար, դեռեւս տարիներ առաջ, մեր գրած յօդուածներում յիշել ենք, որ մամուլի մի անթերի ցուցակ ունենալու համար, նախ պէտք է կազմուի իւրաքանչիւր հայ գաղութի հրատարակած մամուլի ցուցակը, ապա դրանց մէկտեղումից յետոյ, թերեւս հնարաւոր լինի մի անթերի մամուլի ցուցակ ունենալ:

Առ այդ մենք այդպէս էինք մտածում նաեւ հայ տպագիր գրքերի մատենագիտական ցուցակ կազմելու մասին, որի հիման վրայ իսկ, հրատարակեցինք նոր Զուղայի Սբ. Ամենափրկիչ վանքի տպարանի եւ «Մոդերն» ու «Ալիք»ի տպարաններից լոյս տեսած գրքերի ցանկերը, 1972, 1981 եւ 1984 թուականներին:

Մեր առաջարկին որպէս գործնական քայլ, տարիներ է ինչ զբաղուած ենք իրանահայ մամուլի մատենագիտական ցանկի կազմելու աշխատանքով: Այս առթիւ իմ եւ այլոց կողմից մամուլում գրուած յօդուածներից եւ բերուած ցանկերից բացի, դրանց համառօտ մի ցանկը տպագրեուել է նաեւ «Մոդերն տպարանը եւ իր տպագրած գրքերը» աշխատութեան մէջ (թեհրան, 1984, էջ 95–108):

Ինչպէս յիշուեց եւ ինչպէս կազմողն եւս ասում է, այս ցուցակն զերծ չէ թերութիւնից, որոնցից մեր նկատածները, թէ՛ որպէս ուղղում եւ թէ որպէս լրացում, բերում ենք ստորեւ:

— էջ 26 «Բումբայու հայոց լրաթուղթ»ի մասին յիշուած է միայն տարին՝ 1844 եւ «վիմատիպ, գրաբար»:

Սրա մասին յիշուած չէ ոչ Յովհ. Պետրոսեանի եւ ոչ էլ Ամալիա Կիրակոսեանի ցուցակներում: Յիշուած է միայն Յ. Իրազեկի «Պատմութիւն Հնդկահայ տպագրութեան» գրքում (Բէյրութ, 1986, էջ 462–465): Սոյն լրաթերթից մի քանի տարի առաջ, 1988 թուին, մէկ համար ձեռք բերելով, մի յօդուածով ներկայացրինք «Ալիք» օրաթերթում

(Թեհրան, 24 Նոյեմբ. 1988), որտեղ յիշուած է, որ «Լրաթուղթ»ը լոյս է տեսել 1844 թուի Օգոստոսի 3ից, եղել է վիմատիպ եւ շաբաթաթերթ, տպագրուել է Շաբաթ օրերը, նախ եղել է 4 էջ, ապա դարձել է 8 էջեան, ծաւալը 16×20,5 սմ.: Ըստ մեր ունեցած տեղեկութեան, տպագրուել է մինչեւ 10 համար, որ է 5 Հոկտեմբեր «Դուրբին» վիմագրատունը (Doorbin press):

— էջ 26 «Ազդարար» երկշաբաթաթերթը, որ տպագրուել է Բոմբէյում, 1846–47 թուականներին, յիշուած չէ ո՛չ Պետրոսեանի եւ ոչ էլ Կիրակոսեանի ցուցակներում: Այդ մասին առաջին անգամ «Սիոն» ամսագրում (1968, Մայիս–Յունիս, էջ 255–259) տպագրել ենք մի յօդուած եւ տուել որոշ տեղեկութիւններ: Դժբախտաբար յիշուած չէ իր աղբիւրը, որ հետաքրքիր պէտք է լինէր:

— էջ 186. «Վերածնունդ» օրաթերթի համար յիշուած է միայն մէկ բացառիկ թիւ, տպագրուած 1947ին, մինչ մեր ձեռքի տակ եղածը հասնում է 5ի, տպագրուած 1947, 1948 (2), 1951 եւ 1952 թուերին:

— էջ 186. Յիշուած չեն նաեւ «Ալիք»ի բացառիկները, որոնք մեծ թիւ են կազմում:

— էջ 312. «Նոր Ջուղա տեղեկատուն», որ աւելի ճիշտը «Նոր Ջուղայի տեղեկատու» է, որ առաջին անգամ սկսել է տպագրուել մեր երաշխաւորութեամբ պետութեան մօտ, առանց գրաւոր արտօնութեան, եղել է ոչ թէ «կիսամեայ» այլ «կիսամսեայ»:

Այժմ մի քանի խօսք Իրանում չհրատարակուած եւ անունները յիշուած մամուլի մասին:

Մ. Բաբլոյեանի այն դիտողութիւնը, որ «Պելճիքա» երկրի անունը սխալմամբ դարձել է մամուլ, շատ տեղին է, այդ սխալին մենք եւս անդրադարձել ենք, մեր կազմած իրանահայ մամուլի մատենագիտական ցուցակում եւ չենք բերել նաեւ մեր կազմած համառօտ՝ 1984ի ցուցակում: Պէտք է ասել, որ Ջուղայում եղել է նաեւ մի շաբաթաթերթ, հրատարակուած «Բրիտանական եւ Արտաքին Աստուածաշնչի Ընկերութեան» կողմից, որի անունը թերեւս ի նմանութիւն Նոր Ջուղայում արդէն գաղարած «Նոր Ջուղայի լրաբեր»ի՝ դրուել է «Նոր Ջուղայի Աւետաբեր», ըստ երեւոյթին ուզենալով ասել՝ որ բողոքականները նոր աւետիք են բերում Ջուղայի համար: (Այս մասին տեսնել «Նոր Ջուղայի տպարանը...», 1972, էջ 141):

Ցուցակում բերուած չէ նաեւ Իրանում հրատարակուած առաջին պարբերական մամուլը՝ «Համայնք» խորագրով, որի համար «Ալիք»ում գրած մեր յօդուածով (21 Նոյ. 1977) հաստատել էինք որ նման պարբերական 1880 թուին՝ տպագրուել է Ռաշտում բժիշկ Ալեքսանդ

Ա թաբէկեանի խմբագրութեամբ։ Սրա մասին յիշուած է միայն «Հրապարակուած թերթեր»ի ցանկում (էջ 452) ըստ «Բաֆֆի» տարեգրքի մէջ գրուած յօդուածի։

Համաձայն մեր կազմած ցուցակի, Իրանում մինչեւ այժմ՝ տպագիր, մեքենագիր բազմացուած, վիմատիպ եւ ձեռագիր մամուլի թիւը հասնում է աւել քան 130ի, որի շուրջ 20ը 1980 թուից յետոյ, այսինքն մինչեւ 1980ը 110 անուն, մինչդեռ Մ. Բաբլոյեանի ցուցակում գրանցից բերուած է միայն 85ը։

Մեր այս փոքր նշումներով նպատակ չունենք թերագնահատելու կատարուած աշխատանքը, այլ ընդհակառակը, մեր նպատակն է օգնել յետագայ կազմողներին եղած թերիները լրացնելու համար։ Իրապէս Մ. Բաբլոյեանի կատարած աշխատանքը արժանի է գնահատութեան, որի կրած դժուարութիւնները մեզ աւելի քան ծանօթ են եւ գիտենք թէ նման մի ծաւալուն գործ ինչպիսի զոհողութիւնների ու հետեւողականութեան ճիգերով է որ գլուխ է գալիս։

Նոր ոյժ ու կորով եւ նոր եռանդ ու յաջողութիւն ենք մաղթում Մեծն Բաֆֆի գիւղում ծնուած յարգելի Բաբլոյեանին։

Լ. Գ. ՄԻՆԱՍԵԱՆ